

ուին վանքին, վասն զի «ի բնէ» վանքին եղած են, և մեր Առաջնորդներուն թուլութեան հետեւանքով՝ խաները յափշտակած են և կը վայելին զսնունք, առանց թագաւորներուն գիտակցութեան: Շահը երբ կը կարգայ գիրը, կը հրամայէ աչքէ անցնել կալուածատոմարը. զայն քննելով իրազեկ կ'ըլլան՝ թէ էջմիածնի գիւղին կալուածները չեն նշանակուած, և Շահին կը ծանուցանեն: Թագաւորը կը հրամայէ արքունական հրամանով գրել «նոմոս» մը կամ վճիռ մը, և յանձնել կաթողիկոսին, որպէս զի նոյնիսկ եթէ կոյր ծերունի մը նստի էջմիածին, տիրէ անոր, և իշխաններէն ու թագաւորներէն ոչ ոք դպչի կամ մերձենայ այդ տասանորդներուն. և ո՛վ որ հակառակի, թշնամի է Շէս—Սաֆու օճախին: Զայս և թագաւորական հրամանագիրը շարագրելով, կը կնքեն ու կու տան կաթողիկոսին: Հայրապետը զանոնք առնելով էջմիածին կը վերադառնայ և կը սկսի ձեռնարկել բարեգործութեանց, կ'ըսէ Զաքարիա պատմիչ (14):

Երեւանի կառավարիչը՝ Մուհամմէտ—Ղուլի Խան, Փիլիպպոս կաթողիկոսին ընդհատել տուած էր էջմիածնի Եկեղեցւոյն զանգակատան շինութիւնը: Երբ անոր կը յաջորդէ Նաճաֆ—Ղուլի Խան, Յակոբ կաթողիկոս յաճախ կառավարատուն երթալով